# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀՀԱՆ-ԳՀԾ-2022-3

ք. Երևան

«16 » դեկտեմբերի 2022թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն (այսուհետ՝ Դրամաշնորհ տրամադրող)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն (այսուհետ՝ Դրամաշնորհ ստացող)՝ ի դեմս տնօրեն Դավիթ Ղուլյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 1955-Ն որոշման 1-րդ մասը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Դրամաշնորհ տրամադրողը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Դրամաշնորհ ստացողին հատկացնել N 1955-Ն որոշմամբ նախատեսված 418.117.000 (Չորս հարյուր տասնութ միլիոն հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ գումարը, որը տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափն է, իսկ Դրամաշնորհ ստացողը պարտավորվում է իրականացնել «1093. Դատական և հանրային պաշտպանություն» ծրագրի «11004. Փորձագիտական կենտրոնի նյութատեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառումը՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված իրականացվող միջոցառումների նկարագրի և N 2 հավելվածում սահմանված ցուցանիշների շրջանակներում:

## 2. Դրամաշնորհի տրամադրման և ծախսման կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված դրամաշնորհի գումարն անհրաժեշտ է ծախսել Ծրագրի նպատակներին համապատասխան:

2.2. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված դրամաշնորհի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում կատարվում է ոչ նպատակային օգտագործման գումարի հետադարձում:

2.3. Դրամաշնորհ ստացողը պետք է սույն պայմանագրի 1.1. կետում նշված միջոցների ստացման և ծախսման հաշվապահական փաստաթղթերը կազմի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

2.4. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Դրամաշնորհ տրամադրողը սույն պայմանագրի 1.1. կետում նշված դրամաշնորհի գումարը Դրամաշնորհ ստացողին տրամադրում է անկանխիկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչությունում գործող գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով՝ դրամաշնորհի շրջանակներում կազմակերպված գնման ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի պատճենները տրամադրելուց հետո:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

ա) Կողմերի իրավունքները.

3.1. Դրամաշնորհ տրամադրողն իրավունք ունի՝

3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Դրամաշնորհ ստացողի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու նրա բնականոն գործունեությանը, պահանջել տեղեկատվություն կատարվող աշխատանքների վերաբերյալ:

3.1.2. Սահմանել բացահայտված թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ:

3.1.3. Վերահսկել Դրամաշնորհ ստացողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

3.1.4. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

3.1.5 Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Դրամաշնորհ ստացողը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու.

բ. Դրամաշնորհ ստացողը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառման ժամկետ նախատեսված լինելու դեպքում).

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին:

3.2. Դրամաշնորհ ստացողն իրավունք ունի.

3.2.1. Պահանջել Դրամաշնորհ տրամադրողից սույն պայմանագրի 1.1. կետով սահմանված գումարը:

3.2.2. Տեղեկացնել Դրամաշնորհ տրամադրողին սույն պայմանագրով նախատեսված գործունեության ընթացքում առաջացած խնդիրների մասին:

3.2.3 Դրամաշնորհ տրամադրողի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

բ) Կողմերի պարտականությունները.

3.3. Դրամաշնորհ տրամադրողը պարտավոր է՝

3.3.1. Իրականացվող միջոցառումների դիմաց Դրամաշնորհ ստացողին տրամադրվող դրամաշնորհի գումարը վճարել անկանխիկ, ՀՀ 2022թ. պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային բախշվածությանը համապատասխան:

3.3.2 Անհրաժեշտության դեպքերում աջակցել Դրամաշնորհ ստացողին:

3.4. Դրամաշնորհ ստացողը պարտավոր է.

3.4.1. Կանոնադրությամբ սահմանված գործունեությունն իրականացնել ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3.4.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Դրամաշնորհ տրամադրողին ներկայացնել սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ոչ ֆինանսական ցուցանիշների, ինչպես նաև ֆինանսական գործունեության եռամսյակային և տարեկան հաշվետվություններ:

3.4.3 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Դրամաշնորհ տրամադրողի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.4.4. Դրամաշնորհ ստացողը միջոցառումների իրականացման արդյունքում չծախսված գումարները վերադարձնում է ՀՀ պետական բյուջե:

## 4. Պայմանագրային պարտավորությունների կատարման վերջնաժամկետը

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումները պետք է ավարտվեն մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը:

## 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համաճարակը, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե

արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**6. Այլ պայմաններ**

6.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից տարածվում է 2022թ-ի հոկտեմբերի 04-ից ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը:

6.2. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.3. Պայմանագրի փոփոխությունը կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր կողմերի համաձայնությամբ:

6.4. Սույն պայմանագրով կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**7. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **Դրամաշնորհի տրամադրող** | **Դրամաշնորհի ստացող** |
|---|---|
| ՀՀ արդարադատության նախարարություն | «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ |
| ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8 | ք. Երևան, Արշակունյաց 23, |
| ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն | ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն, թիվ 1 ՏԳԲ |
| Հ/Հ 900011037315 | Հ/Հ 900018003146 |
| ՀՎՀՀ 02506264 | ՀՎՀՀ 02512069 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն |
| Մ. Գևորգյան | Դ. Ղույյան |
| «------»----------2022թ. | «16»----19----2022թ. |

Հավելված 1
«16» դեկտեմբերի 2022թ.
կնքված դրամաշնորհի
№ ՀՀԱՆ-ԳՀԾ-2022-3
պայմանագրի

Դրամաշնորհի տրամադրման պայմանագրի շրջանակներում
մատուցվող ծառայություններ

Պայմանագրի համարը _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը «_____» _____ 2022թ.

| **Ծրագրի դասիչը** | **Ծրագրի անվանումը** |
|---|---|
| *1093* | *Դատական և հանրային պաշտպանություն* |
| **Ծրագրի միջոցառումները** | |
| Ծրագրի դասիչը՝ | *1093* |
| Միջոցառման դասիչը՝ | *11004* |
| Միջոցառման անվանումը՝ | *Փորձագիտական կենտրոնի նյութատեխնիկական հագեցվածության ապահովում* |
| Նկարագրությունը՝ | *Քրեական հետապնդում, վարչական վարույթ իրականացնող մարմինների կամ քրեական գործերով դատարանների որոշումների հիման վրա փորձագիտական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում* |
| Միջոցառման տեսակը՝ | *Ծառայությունների մատուցում* |
| Արդյունքի չափորոշիչներ | |
| Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ) | 418,117.0 |

**Դրամաշնորհի տրամադրող**

ՀՀ արդարադատության նախարարություն

ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
հ/հ 900011037315
ՀՎՀՀ 02506264

Գլխավոր քարտուղար Ս. Գևորգյան

«------» ---------- 2022թ.

**Դրամաշնորհի ստացող**

«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Արշակունյաց 23,
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն՝ թիվ 1 ՏԳԲ
հ/հ 900018003146
ՀՎՀՀ 02512069

Տնօրեն Դ. Դուլյան

«16» 12 2022թ.

Հավելված 2
«16» դեկտեմբերի 2022թ.
կնքված դրամաշնորհի
№ ՀՀԱՆ-ԳՀԾ-2022-3
պայմանագրի

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022 թվականի «1093. Դատական և հանրային պաշտպանություն» ծրագրի «11004. Փորձագիտական կենտրոնի նյութատեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառման իրականացման ծախսերի նախահաշիվ

Հազար դրամ

| Ծրագրի միջոցառման անվանումը | Ընդամենը տարեկան | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2022թ-ի պետական բյուջեից, ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր |
| «11004. Փորձագիտական կենտրոնի նյութատեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառում | 418117.0 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 418117.0 |

**Դրամաշնորհի տրամադրող**

ՀՀ արդարադատության նախարարություն

ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011037315
ՀՎՀՀ 02506264

Գլխավոր քարտուղար

Ս. Գևորգյան

«------»----------2022թ.

**Դրամաշնորհի ստացող**

«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Արշակունյաց 23,
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն, թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069

Տնօրեն

Դ. Ղուկյան

«16» 12 2022թ.